

**«Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագիր
Փոքր դրամաշնորհների հայտի ձև**

Ծրագրի անվանումը	<Մոնիտորինգը որպես կոռուպցիոն ռիսկերի նվազեցման գործիք պետական եկամուտների հավաքագրման ոլորտում>
Դիմող կազմակերպության անվանումը	<Գավառի բիզնես կենտրոն> հասարակական կազմակերպություն
Կոնտակտային անձ և կոնտակտային տվյալներ	Անահիտ Շահզադյան, հեռ. 094 05 75 35, էլ. փոստ՝ anahit.shahzadyan@gmail.com
Ծրագրի իրականացման վայրը (մարզ, համայնք)	ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ, Սայադյան 27
Ծրագրի տևողությունը	Չորս ամիս
Ծրագրի հակիրճ նկարագրիրը	Մոնիտորինգի միջոցով բացահայտել իրավիճակը պետական եկամուտների հավաքագրման ոլորտում հարկային բարեփոխումների իրականացումից հետո: Հրապարակումների և քննարկումների միջոցով բարձրացնել տեղեկատվության մակարդակը հարկատուների մոտ:
ՀԵԻԱ-ից պահանջվող Գումարի չափը	970000 /ինն հարյուր յոթանասուն հազար/ ՀՀ դրամ
Ներդրման գումարի չափը	168500 /մեկ հարյուր վաթսուներեք հազար հինգը հարյուր/ ՀՀ դրամ
Ծրագրի բյուջեն (նշել դրամով)	1138500 /մեկ միլիոն մեկ հարյուր երեսուներեք հազար հինգը հարյուր/ ՀՀ դրամ
Ծրագրի գործընկեր կազմակերպությունը (եթե առկա է)	Գործընկեր կազմակերպություն առկա չէ, սակայն Ծրագրի իրականացման ընթացքում կապահովվի մարզում գործող լրագրողական և մյուս հասարակական կազմակերպությունների մասնակցությունը:

Դիմող կազմակերպության նկարագրություն

«Գավառի բիզնես կենտրոն» ՀԿ հիմնադրվել է 2004 թ., կայացած է, գործունեության տարիների ընթացքում ձեռք է բերել ճանաչում և հեղինակություն: Ունի փորձառու անձնակազմ, սեփական գրասենյակային տարածք և գույք: Կազմակերպությունը սերտորեն համագործակցում է հայաստանյան ու միջազգային կազմակերպությունների, Գեղարքունիքի մարզպետարանի, մարզի ՀԿ-ների, համայնքների, Գավառի քաղաքապետարանի, Գեղարքունիքի մարզի առևտրաարդյունաբերական պալատի, ՓՄՁ ԶԱԿ-ի, Զբաղվածության գործակալության տարածքային կենտրոնի հետ: Իրականացրել է հետևյալ ծրագրերը՝

2004թ.-2014թ.թ. Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնի /ՓՄՁ ԶԱԿ, SME DNC/ և, Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալություն /JICA/

աջակցությամբ հաշվապահական և հարկային դասընթացների և խորհրդավորություն իրականացվում՝ աշխատանք մարզի կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի հետ,

2004-2009թթ. Հայաստանի տարածքային զարգացման ծրագրի Գեղարքունիքի գրասենյակ /DFID/՝ սոցիալական ոլորտի, ինչպես նաև՝ տարածաշրջանի բիզնես գրավչության մեծացմանը միտված ծրագրերի մշակում: Ծրագրի շրջանակներում կատարվել են հարցումներ, հետազոտություններ և ուսումնասիրություններ, որոնց արդյունքում մշակվել է աշխատանքային հայեցակարգ՝ վերհանված հիմնախնդիրները լուծելու նպատակով. Գեղարքունիք մարզի աղքատության հաղթահարման ռազմավարության մշակում, Վաուչերային համաֆինանսավորման համար առաջարկվող ծառայությունների մատուցում,

2004թ. ԳԱԱՊ /GCC/ , ProSME, PEM և OSCE աջակցությամբ վերապատրաստում Գերմանիայում,

2004-2005թ.թ. ԳԱԱՊ / GCC/ և Եվրասիա հիմնադրամի /Te Eurazia Foundation/ հետ համատեղ՝ «Արդյունավետ Բիզնես» ծրագրի իրականացում,

2004-2006թ.թ. Գեղարքունիքի մարզի 120 ուսուցիչների վերապատրաստում ՀՀ Կրթության և Գիտության նախարարության ԾԻԳ-ի ծրագրով,

2007թ. Հայաստանի ավագանիների ասոցացիայի /AMC/ հետ համատեղ՝ «Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության օրենսդրական դաշտը և ֆինանսական կառավարում» ծրագրի իրականացում, 2007թ. վերապատրաստում Բուլղարիայում,

2010թ. RTI աջակցությամբ համայնքում հանրային լսումների կազակերպում,

2010-2012թ. մասնագիտություն ունեցող, աշխատանքային փորձ չունեցող անձանց վերապատրաստում Զբաղվածության գործակալության փոխհատուցման ծրագրերով,

2010-2013թթ. աշխատանք Խաղաղության կորպուսի կամավորի հետ, անվճար դասընթացների կազմակերպում:

Ծրագրի նկարագրություն

Հայաստանում կատարվել են բարեփոխումներ հարկային ոլորտում, որոնց իրականացման արդյունքում պետք է նաև նվազեն կոռուպցիոն ռիսկերը: Սակայն հարկատուները չունեն բավարար տեղեկատվություն, իսկ հարկային տեսչության և տեսուչի կողմից դրանք լիովին չեն ներկայացվում և շատ հաճախ բարեփոխումների ընձեռնած հնարավորությունները չկիրառելու հետևանքով մեծանում են կոռուպցիոն ռիսկերը: Դրանով է պայմանավորված նաև ոլորտային բարեփոխումների քիչ ազդեցությունը երկրի տնտեսական զարգացման վրա և պետական եկամուտների հավաքագրման գործընթացի ոչ բավարար մակարդակը:

Ծրագրի նպատակն է մոնիտորինգի միջոցով վերլուծել իրավիճակը հարկային ոլորտում, մասնավորապես՝

- հարկային վճարումների պլանավորումը հարկային տեսչության կողմից,
- հարկային ստուգումների ընթացակարգի և հարկային ծառայողի վարքագծի կանոնների պապահպանումը հարկային տեսուչի կողմից, ,
- հարկային տեսուչների հետ շփումները և դրանց հետևանքները /օրինակ Գավառի տարածքային հարկային տեսչության տեսուչներից մեկի անունը Մարտունու հարկատուներից մեկը կնքել է <Սև թուղթ> մականվամբ/,
- ինչպես ենք կիրառում հարկային բարեփոխումներն և ինչ ազդեցություն են ունենում դրանք մարզի տնտեսության վրա,

- պարզել ՓՄՁ-ների գնահատականները հարկային բարեփոխումների վերաբերյալ, քանի որ հարկային տեսչության կողմից դեռևս խրախուսվում են անձնական շփումները:
- հնարավոր է արդյոք երկխոսություն հարկային տեսչության և հարկատուի միջև հանդիպումների, քննարկումների և գրույցների միջոցով:

Ծրագրի իրականացման, հաջող ընթացքի և ծրագրի նպատակներն հասնելու համար՝

- Կազմակերպության փորձագետների կողմից կատարաստվեն հարցաթերթեր և նամակ մարզի հարկային տեսչությունների պետերին ուղղված, որտեղ կտեղեկացվի ծրագրի և դրա նպատակներին հասնելու ուղղությունների մասին: ՀՀ Գեղարքունիքի մարզում գործում են երկու հարկային տեսչություն՝ Սևանի և Ճամբարակի համար, Գավառի, Մարտունու և Վարդենիսի համար: Ծրագիրը կներառի ողջ մարզի տարածքը:
- Կազմակերպության փորձագետների կողմից կատարաստվեն 500 /հիգ հարյուր/ հատ հարցաթերթ պետական եկամուտների հավաքագրման և ընդհանրապես հարկային ոլորտի վերաբերյալ հարկատուների և հասարակության լայն շերտերի համար նախատեսված:
- Ծրագրի իրականացման երրորդ շաբաթից սկսած կանցկացվեն հարցումներ ՀՀ Գեղարքունիքի մարզում գործող 300 /երեք հարյուր/ հարկատուների և 200 /երկու հարյուր/ այլ անձանց շրջանակներում, որոնք կամփոփվեն փորձագետների կողմից:
- Հարցաթերթերի ամփոփման արդյունքները կքննարկվեն մարզի հարկային տեսչությունների ներկայացուցիչների, հարկատուների, հասարակական կազմակերպությունների, մարզպետարանի, քաղաքապետարանների և գյուղապետարանների ներկայացուցիչների հետ: Քննարկման արդյունքները գրավոր կներկայացվեն մարզի հարկային տեսչության պետերին: Անհրաժեշտության դեպքում քննարկման արդյունքները կներկայացվեն նաև՝ ՀՀ ֆինանսների նախարարություն:
- Ծրագրի իրականացման ընթացքին կներգրավվեն մարզում գործող լրագրողական և մյուս ՀԿ-ները: Ծրագրի ընթացքը և արդյունքները կմեկնաբանվի մարզային հեռուստատեսությամբ:
- Կազմակերպության փորձագետների կողմից կատարաստվի նամակ-զեկուցագիր ՀՀ ֆինանսների նախարարի անունով, որտեղ կնկարագրվի ծրագրի արդյունքների մասին և կհայցվի հանդիպում ծրագրի ղեկավարի, փորձագետի և մարզի հասարակական կազմակերպությունների երկու ներկայացուցիչների հետ: Հանդիպման արդյունքում ակնկալվում է տալ լուծում ծրագրում նկարագրված խնդիրների մեծ մասին:

Ծրագրի արդյունքում կունենքանք՝

- տեղեկացված և իր շահերը պաշտպանելու պատրաստ հարկատու, հարկային տեսչության կողմից կատարվող պլանավորումները հարկ վճարողի ներկայացրած հարկային հաշվարկներին համապատասխանեցում,
- հարկային ծառայողի վարքագծի կանոններն որոշակի պահպանող հարկային տեսուչներ,
- հարկային տեսուչի և հարկատուի անձնական շփումների նվազում,
- հնարավոր արդյունավետ երկխոսություն հարկային տեսչության և ՓՄՁ միջև,
- վերը թվարկվածներով պայմանավորված կոռուպցիոն ռիսկերի նվազում:

Ծրագրի հաջող ընթացքը և ակնկալվող արդյունքները կնպաստեն որպեսզի մարզում գործող հարկատուները տնտեսվարեն հոգեկան ավելի խաղաղ վիճակում և կենտրոնանան իրենց տնտեսության և դրա զարգացման հնարավոր որոնման ուղիների վրա, քան հարկային տեսուչի ու նրա կատարած գործողությունների վրա: Եվ ամենակարևորը, որ ցանկացած պահի կկարողանան գնահատել հարկային տեսուչի գործողությունների օրինականությունը:

Ժամանակացույց

(Խնդրում ենք ներկայացնել ծրագրի ժամանակացույցը՝ հետևելով առաջարկվող աղյուսակին:
Անհրաժեշտության դեպքում կարող եք ավելացնել լրացուցիչ տողեր:)

Շաբաթ	Գործողություն
1-ին	Աշխատակազմի ձևավորում, անհրաժեշտ պարագանների ձեռք բերում
2-րդ	Հարցաթերթերի պատրաստում
3րդ-15-րդ	Հարցումների անցակացում, հեռուստահաղորդում,
16-րդ	Քննարկում, ամփոփում, հաշվետվությունների պատրաստում

Բյուջե / Հավելված Budget

Ծրագրի բյուջեն հետևյալն է՝

1. Աշխատակազմ, որը ներառում է
 - Մեկ ծրագրի համակարգող՝ ամսական 60000 դրամ, 4 ամսվա համար 240000 դրամ, որը պահանջվում է ՀԵԻԱ-ից,
 - Երկու փորձագետ, յուրաքանչյուրին ամսական 50000 դրամ, չորս ամսվա համար 400000 դրամ, որը պահանջվում է ՀԵԻԱ-ից:
2. Ճանապարհածախս՝
 - Կկատարվի այց մարզի 4 քաղաքներ՝ Մարտունի, Վարդենիս, Ճամբարակ, Սևան: Յուրաքանչյուր այցը 20000դրամ տաքսի ծառայության համար, ընդամենը կկազմի 80000 դրամ, որը պահանջվում է ՀԵԻԱ-ից:
 - ԿԿատարվի այց մարզի 30 գյուղական համայնքներ, յուրաքանչյուր այց 3000 դրամ, ընդամենը 90000, որից 65500 դրամը որը պահանջվում է ՀԵԻԱ-ից, իսկ 24500 դրամը որը կներդնի կազմակերպությունը,
 - Մեկ աշխատանքային այց Երևան, ՀՀ ֆինանսների նախարարի հետ հանդիպում ունենալու համար, ընդամենը 20000դրամ:
3. Գրասենյակային պարագաները ներառում են՝
 - թուղթ 15 տուփ, յուրաքանչյուրը 2500 դրամ, նդամենը 37500 դրամ, որը պահանջվում է ՀԵԻԱ-ից: Այն կօգտագործվի 3 թերթ կազմող հարցաթերթերի տպագրման և գրասենյակայինն աշխատանքների համար,
 - 5 հատ ֆլիպչարտի թուղթ, որը կօգտագործվի քննարկումների և հանդիպումների ժամանակ:

5. Այլ ուղղակի ծախսերն են՝

- տարածքի վարձակալությունը ամսական 25000 դրամ, ընդամենը 100000 դրամ, հեռախոսի և ինտերնետի վճարը ամսական 11000 դրամ, ընդամենը 44000, որոնք կներդրվեն կազմակերպության կողմից,
- կոմունալ ծախսեր՝ էլ. էներգիա, պահպանության, գազի, ջրի, աղբ վարձ, ամսական 26125 դրամ , ընդամենը 104500 դրամ:

Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 1138500 /մեկ միլիոն մեկ հարյուր երեսունուրը հազար հինգը հարյուր/ ՀՀ դրամ, որից պահանջվում է ՀԵԻԱ-ից 970000 /ինն հարյուր յոթանասուն հազար/ ՀՀ դրամ, իսկ կազմակերպության կողմից կատարվող ներդրումը կազմում է 168500 /մեկ հարյուր վաթսուները հազար հինգը հարյուր/ ՀՀ դրամ:

<Գավառի բիզնես կենտրոն> ՀԿ
Նախագահ

Անահիտ Շահգալյան